

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ
ՍՈՒԲՍԻԴԱՎՈՐՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻՆ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ
ՄԱՍԻՆ**

Հավանություն տալ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության
գյուղատնտեսության սուբսիդավորման հայեցակարգին՝ համաձայն հավելվածի:

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ**

Ա.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հ Ա Յ Ե Ց Ա Կ Ա Ր Գ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՍՈՒԲՍԻԴԱՎՈՐՄԱՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տնտեսության ազատականացումը, հողի և գյուղատնտեսական արտադրության մյուս միջոցների, արտադրական և սպասարկող ենթակառուցվածքների, գյուղմթերքներ իրացնող և վերամշակող կազմակերպությունների մասնավորեցումը հուսալի նախադրյալներ են ստեղծել գյուղում առկա ներուժի արդյունավետ օգտագործման համար:

Ակնհայտ է, որ պետական տարբեր ծրագրերի իրագործման արդյունքում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղատնտեսության բնագավառում վերջին տարիներին արձանագրվել են դրական տեղաշարժեր, սակայն վերջիններս ձեռք են բերվել առավելապես էքստենսիվ գործոնների՝ գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքատարածությունների և անասունների գլխաքանակի ավելացման շնորհիվ:

Ինտենսիվ գյուղատնտեսության զարգացմանը դեռևս խոչընդոտում են մի շարք գործոններ, որոնցից կարելի է առանձնացնել գյուղատնտեսության վարման բարձր ռիսկայնությունը, գյուղացիական տնտեսությունների փոքր չափերը և հողաբաժինների մասնատվածությունը, խոշոր ապրանքային տնտեսությունների ցածր տեսակարար կշիռը, արտադրական և շուկայական (ֆինանսական) ենթակառուցվածքների թերզարգացածությունը, որոնք, նույնիսկ պետական աջակցության ներկա պայմաններում, դժվարացնում են ընդլայնված վերարտադրության կազմակերպման, գյուղմթերքների իրացման և վերամշակման օղակների ձևավորման աշխատանքները:

Հաշվի առնելով ագրարային ոլորտի առանձնահատկությունները և երկրի պարենային անվտանգության ապահովման առաջնահերթությունը, չափազանց կարևորվում է գյուղատնտեսության պետական նպատակամետ ակտիվ աջակցությունը, մասնավորապես՝ սուբսիդավորումը, որը պետք է ուղղված լինի ագրարային ոլորտում իրավաօրենսդրական հիմքի կատարելագործմանը, գյուղատնտեսության բնագավառում տնտեսվարողների համար գործունեության և ներդրումների բարենպաստ պայմանների ապահովմանը, գիտական նվաճումների և նոր տեխնոլոգիաների ներդրմանը, ենթակառուցվածքների, սննդամթերքի անվտանգության և մասնագիտական խորհրդատվության համակարգերի ձևավորմանն ու զարգացմանը:

Սույն հայեցակարգում ներկայացվում են գյուղատնտեսության սուբսիդավորման ընդհանուր մոտեցումները և սկզբունքները:

1. ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ, ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Միջազգային փորձը ցույց է տալիս, որ ինչպես զարգացած, այնպես էլ զարգացող երկրներում տնտեսության շուկայական կարգավորումը զուգակցվում է

գյուղատնտեսության պետական աջակցություն ցուցաբերելու քաղաքականության հետ: Նման մոտեցումը հիմնավորվում է հետևյալ պատճառներով՝

1) գյուղատնտեսությունն ընդունվում է որպես տնտեսության ռազմավարական ճյուղ, քանի որ պարենային ինքնաբավությունը մեղմացնում է արտակարգ իրավիճակի պայմաններում երկրի պարենային անվտանգության ռիսկերը:

2) գյուղատնտեսությունը կախված է բնական գործոններից, որոնք սահմանափակում են արտադրության դիվերսիֆիկացման հնարավորությունները և ստեղծում անհավասար պայմաններ տարբեր բնական գոտիների գյուղացիական տնտեսությունների համար:

3) գյուղատնտեսությունը բազմագործառնությամբ ոլորտ է, այն չի սահմանափակվում միայն գյուղարտադրանքի արտադրությամբ, այլ նպաստում է տնտեսության մյուս ճյուղերի զարգացմանը՝ դրանով իսկ հնարավորություններ ստեղծելով գյուղական տարածքների զարգացման, ժողովրդագրական իրավիճակի բարելավման, բնակչության կենսամակարդակի բարձրացման համար:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղատնտեսության սուբսիդավորման հայեցակարգը (այսուհետ՝ հայեցակարգ) գյուղատնտեսության պետական աջակցություն ցուցաբերելու քաղաքականության հստակեցման և ոլորտի կայուն զարգացման ռազմավարության իրականացման նպատակով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության ընդհանուր մոտեցումները կանխորոշող փաստաթուղթ է:

Հայեցակարգի ընդունման նպատակը հանրապետության տարբեր բնատնտեսական պայմաններում գյուղատնտեսական գործունեություն իրականացնող սուբյեկտների համար նպաստավոր մրցակցային միջավայրի ձևավորումը և ճյուղի զերակա ուղղությունների զարգացումը խթանող պայմանների ստեղծումն է:

Հայեցակարգի խնդիրներն են՝

1) գյուղատնտեսության սուբսիդավորման հիմնական ձևերի սահմանումը:

2) գյուղատնտեսության սուբսիդավորման գործընթացի կազմակերպման մեխանիզմի սահմանումը:

3) հայեցակարգի դրույթներից բխող ծրագրերի իրագործումը:

2. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՍՈՒԲՍԻԴԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՁԵՎԵՐԸ

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղատնտեսության ոլորտում առկա խնդիրների լուծումը և հետագա կայուն ու արդյունավետ զարգացման համար անհրաժեշտ նախադրյալների ձևավորումը պահանջում է բնագավառում պետական աջակցության (սուբսիդավորման) հստակ քաղաքականության իրականացում:

Սույն հայեցակարգի իմաստով սուբսիդիան տնտեսության որևէ ճյուղի կամ գործունեության որոշակի ոլորտների խթանման նպատակով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական բյուջեից տնտեսվարող սուբյեկտներին տրամադրվող անհատույց ու անվերադարձ դրամական հատկացումն է:

Նկատի առնելով հանրապետության գյուղատնտեսության առանձնահատկությունները, ինչպես նաև՝ գյուղատնտեսական արտադրության արդյունավետության բարձրացման կարևորությունը, սույն փաստաթղթով սահմանվում են գյուղատնտեսության սուբսիդավորման հետևյալ ձևերը՝

1) *վարկերի տոկոսադրույքների մասնակի սուբսիդավորում*. այս դեպքում պետությունը սուբսիդավորում է առևտրային բանկերից տնտեսվարողների վերցրած վարկերի տոկոսադրույքների մի մասը, ընդ որում մի կողմից նախապատվություն է տրվում գյուղաոլորտի այն ենթաճյուղերի վարկավորմանը, որոնք նպաստում են երկրի պարենային անվտանգության մակարդակի բարձրացմանը, մյուս կողմից՝

առաջնահերթ վարկավորում են կոռպորացիայի կամ այլ հիմունքներով համատեղ արտադրություն կազմակերպող գյուղացիական տնտեսությունները, ինչը միանգամայն հնարավոր է դարձնում համակարգված ցանքաշրջանառության կիրառումը, ոռոգման, պարարտացման, ագրոտեխնոլոգիական և զոոտեխնոլոգիական անհրաժեշտ միջոցառումների արդյունավետ իրականացումը, նպաստում տնտեսությունների ապրանքայնության մակարդակի բարձրացմանը, իրացման խնդրի լուծմանը և այլն.

2) հողի մշակության համար աջակցության տրամադրում. տվյալ դեպքում մշակվող հողատարածքների յուրաքանչյուր միավորի համար կիրառվում են սուբսիդավորման տարբեր մեխանիզմներ.

3) երաշխավորված (նպատակային) գնային քաղաքականության իրականացում. դրա էությունը կայանում է նրանում, որ պետությունը կենսապես կարևորագույն արտադրատեսակների համար ամեն տարի սահմանում է իրացման երաշխավորված գին՝ հաշվի առնելով յուրաքանչյուր արտադրանքի ինքնարժեքն ու շահույթը: Այնուհետև, շուկայի իրավիճակից ելնելով, պետության կողմից իրականացվում է գնային միջամտություն, այսինքն, եթե շուկայում գործում է նշված արտադրանքների իրացման երաշխավորված գներից ցածր գին, ապա պետության կողմից գյուղացիական տնտեսություններին փոխհատուցվում է երաշխավորված և գործող շուկայական գների տարբերությունը.

4) աջակցություն շուկայական գներին. նշված մեխանիզմը հանդիսանում է անուղղակի սուբսիդավորման ձև, որն իրականացվում է երկրում իրացվող գյուղատնտեսական արտադրանքի նվազագույն շուկայական գնի կարգավորման միջոցով: Հիմնականում դա կատարվում է ի հաշիվ ներմուծվող՝ սուբսիդավորման ենթակա նմանատիպ արտադրանքի նկատմամբ բարձր մաքսատուրքեր սահմանելու միջոցով.

5) արտադրության միջոցների ձեռքբերմանն աջակցություն. տվյալ դեպքում պետությունն աջակցության տարբեր մեխանիզմներով սուբսիդավորում է գյուղացիական տնտեսությունների կողմից անհրաժեշտ ռեսուրսների՝ մեքենաների, սարքավորումների, սերմերի, տոհմային անասունների, պարարտանյութերի, թունանյութերի, վառելիքի, քսանյութերի և այլնի ձեռքբերման, ինչպես նաև ոռոգման ջրի և ապահովագրության վրա կատարված ծախսերի մի մասը.

6) բնական աղետների հետևանքով առաջացած վնասի փոխհատուցում. սուբսիդավորման տվյալ ձևի դեպքում պետությունը փոխհատուցում է բնական տարբեր աղետների (կարկտահարություն, երաշտ, հրդեհներ, անասնաճարակներ և այլն) հետևանքով գոյացած վնասի մի մասը,

7) աջակցություն պետական գրանցում ստացած գյուղացիական տնտեսություններին. այս դեպքում պետությունը սուբսիդիաներ է տրամադրում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով գրանցված գյուղացիական տնտեսություններին.

8) արտահանման ուղղվածություն ունեցող արտադրատեսակների արտադրության և արտահանման խթանմանն աջակցություն. պետությունն աջակցության տարբեր մեխանիզմների միջոցով նպաստում է արտահանման ուղղվածություն ունեցող ագրոարդյունաբերական արտադրանքի արտադրության ծավալի և արտահանման հնարավորությունների ընդլայնմանը:

3. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՍՈՒԲՍԻՂԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾՆԹԱՅԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՆԱԽԸՆՏՐԵԼԻ ՄԵԽԱՆԻԶՄԸ

Գյուղատնտեսության սուբսիդավորման գործընթացի իրականացումը պահանջում է որոշակի նախապատրաստական աշխատանքներ և գործուն մեխանիզմների կիրառում:

Սուբսիդավորման կազմակերպման գործընթացում պետք է ընդգրկվեն գյուղացիական տնտեսությունները, գյուղատնտեսության ոլորտում տնտեսվարողները, տեղական ինքնակառավարման մարմինները, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության շրջանների վարչակազմերի գյուղատնտեսության ստորաբաժանումները, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի տարածքային ստորաբաժանումները, ոլորտը համակարգող պետական կառավարման մարմինը:

Ելնելով սուբսիդավորման կոնկրետ ձևից, գործընթացը պետք է ընդգրկի հետևյալ փուլերը՝

1) գյուղացիական տնտեսություններին, գյուղատնտեսության ոլորտում տնտեսվարող սուբյեկտներին սուբսիդավորման գործընթացի, նրա պայմանների մասին իրազեկելը (այդ գործընթացում հիմնական դեր պետք է ունենան Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տեղական ինքնակառավարման մարմինները):

2) գյուղացիական տնտեսվարողների կողմից սուբսիդավորման հայտերի նախապատրաստելը և տեղական ինքնակառավարման մարմիններին տրամադրելը: Վերջիններիս կողմից դրանք ճշգրտելը և համապատասխան շրջանի վարչակազմին ներկայացնելը:

3) շրջանների վարչակազմերի կողմից սուբսիդավորման ելակետային փաստաթղթերը վերանայելը և ամփոփելը:

4) շրջանների վարչակազմերի կողմից վերանայված և ամփոփված սուբսիդավորման ելակետային փաստաթղթերը Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղատնտեսության նախարարություն ներկայացնելը:

5) ըստ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության շրջանների, համայնքների սուբսիդավորման մասին եզրակացությունները և հաշվարկները Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն ներկայացնելը՝ միջնաժամկետ ծախսային ծրագրերում և տվյալ տարվա բյուջետային ծախսերում ներգրավելու համար:

6) Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության կողմից սուբսիդիաները հատկացնելը:

4. ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻ ԴՐՈՒՅԹՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ

Գյուղատնտեսության սուբսիդավորման գործընթացն ընդգրկում է գյուղալորտի տարբեր ուղղություններ և առնչվում է գյուղատնտեսությամբ զբաղվող բազմաթիվ տնտեսվարող սուբյեկտների հետ, որոնք ունեն տարբեր մասնագիտացում, հետևաբար, սույն հայեցակարգով սահմանված քաղաքականության իրականացման նպատակով անհրաժեշտ է մշակել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղատնտեսության սուբսիդավորման հայեցակարգից բխող ամենամյա հստակ ծրագրեր: Յուրաքանչյուր տարվա ծրագիր իր մեջ պետք է ներառի գյուղատնտեսության սուբսիդավորման տվյալ տարվա ուղղությունները, դրանց նպատակները, իրագործման մեխանիզմները և ֆինանսավորումը:

Ծրագրերի մշակման գործընթացում անհրաժեշտ է հաշվի առնել՝

1) գյուղատնտեսությունում տնտեսվարողների գործունեություն ծավալելու վերաբերյալ տեղեկությունները, որոնք հնարավորություն կտան հստակեցնելու գյուղատնտեսության պետական աջակցության յուրաքանչյուր տարվա հիմնական ուղղությունները.

2) համապատասխան դիտարկումների (մոնիթորինգի) իրականացման արդյունքում սուբսիդավորման ենթակա ուղղությունների ընտրության հիմնավորումը.

3) մասնագիտական վերլուծությունների ու հաշվարկների հիման վրա ոլորտի նախընտրելի ուղղությունների սուբսիդավորման կոնկրետ մեխանիզմների սահմանումը՝ պետական բյուջեի յուրաքանչյուր տարվա հնարավորություններին համապատասխան:

5. ԵԶՐԱՓՈՒԿ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Գյուղատնտեսության սուբսիդավորման հայեցակարգով սահմանված դրույթների իրականացման արդյունքում նախադրյալներ կստեղծվեն բնագավառի կայուն ու արդյունավետ զարգացման համար, մասնավորապես՝

1) գյուղացիական տնտեսությունների շրջանառու միջոցների համալրմամբ պայմաններ կստեղծվեն ընդլայնված վերարտադրության կազմակերպման, գյուղատնտեսության համախառն արտադրանքի ավելացման համար.

2) կբարձրանա հողային, նյութատեխնիկական, աշխատանքային ռեսուրսների օգտագործման մակարդակը և արդյունավետությունը.

3) հնարավորություններ կստեղծվեն նախընտրելի մասնագիտացման ձևավորման և շուկայի պահանջներին համապատասխան արտադրության ծավալների կարգավորման համար.

4) կկայունանան ագրովերամշակող արդյունաբերության հումքային բազան և արտադրության ծավալները, ինչն էական դերակատարում ունի երկրի մակրոտնտեսական ցուցանիշների բարելավման գործում:

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ**

Լ.ԳՐԻԳՈՐՅԱՆ